



**ՄԵՐ ԽՕՍՔԸ**

Հայ ժողովուրդին համար, Ապրիլը պահանջատիրության ոգին նորոգելու ամիս է: Ամեն հայու մէջ, այդ ոգին կ'ապրի տարուան ընթացքին ամէն օր եւ չի սահմանափակուիր միայն Ապրիլ ամիսով: Այդ ոգին միշտ մեր մտածումներուն մէջն է եւ մեր զգացումներուն. բայց Ապրիլեան համախմբումներով կը վերանորոգուի եւ քարոզչական մեր աշխատանքը կը կատարուի, որպէսզի մենք լաւ ճանչնանք մեր պատմութիւնը, եւ որպէսզի օտարներու ուշադրութիւնը գրաւենք Ատրպէյճանի եւ Թուրքիոյ վարած հակահայ քաղաքականութեան վրայ: Ինչպէս օրինակ՝ անդրադառնանք 2020-ի Արցախի հայաթափման, մարդու իրաւունքներու խախտումներու հարցին եւ ապօրինի պահուող հայ ռազմագերիներու վերադարձի խնդիրներուն մասին:

Հայեր, ուր որ ալ գտնուին աշխարհի տարածքին, Ապրիլ 24-ին կը համախմբուին՝ ոգեկոչելու 1915-ի Ապրիլեան նահատակներու յիշատակը:

Կարեւոր է համախմբուիլ, կարդալ, խօսիլ ու լսել մեր պատմութեան ամէնէն ցաւալի էջերուն մասին:

Կարեւոր է, որպէսզի այդ յիշատակը թարմ մնայ մեր բոլորին մտքերուն մէջ:

Կարեւոր է, որովհետեւ դժբախտաբար այդ ջարդերը դարձեալ կը կրկնուին:

Կարեւոր է, որովհետեւ երբ ծանօթ ենք մեր անցեալին, կ'ըլլանք արթուն պահակը մեր իրաւունքներուն: Չենք տկարանար. չենք յանձնուիր թուրքին ու ազերիին, այլ արժանապատիւ կերպով կը շարունակենք մեր պայքարը: Պայքար՝ պահելու մեր ինքնութիւնը՝ հայ եւ մեր հայրենիքը՝ Հայաստան: Պայքար՝ հասնելու մեր բոլոր իրաւունքներուն:



Պայքարի ճամբուն վրայ, շատ կարեւոր է ծանօթացնել մեր Դատը օտարներուն, թէ՛ խօսելով, թէ՛ գրելով այդ մասին օտար լրատուամիջոցներու մէջ:

Դուն ալ, որպէս հայ աշակերտ քու ներդրումը բերած կ'ըլլաս Հայ Դատին, ներկայ ըլլալով Ապրիլ ամսուան կազմակերպուած ցոյցերուն եւ հաւաքներուն:

Ապրիլնք ու միասին հետապնդենք մեր Դատը:

**ԱՊՐԻԼ 24**

Հայոց Յեղասպանութեան ընթացքին նահատակուած են մէկուկէս միլիոն հայեր, ինչպէս նաեւ բազմաթիւ հայ մտաւորականներ, գրողներ, արուեստագէտներ եւ ազգային առաջնորդներ, որոնք մեծ դեր ունեցած են հայ մշակոյթի եւ ինքնութեան պահպանման մէջ: Այդ յայտնի դէմքերէն են. Գրիգոր Զօհրապ, Սիամանթօ, Ռուբէն Սեւակ եւ Դանիէլ Վարուժան:



**Գրիգոր Զօհրապ**

Հայ արձակագիր, փաստաբան եւ քաղաքական գործիչ, որ իր գրականութեամբ եւ ելոյթներով պայքարած է պաշտպանելու հայ ժողովուրդի իրաւունքները: Իր նորավէպերէն են. «Կեանքը ինչպէս որ է», «Լուռ ցաւեր» եւ «Խղճմտանքի ձայներ»:



**Սիամանթօ (Ատոմ Եարճանեան)**

Հայ բանաստեղծ, որ իր ստեղծագործութիւններով արտայայտած է հայ ժողովուրդի ցաւն ու տառապանքը, արտայայտած է նաեւ անոր պայքարն ու վրիժառութեան ոգին: Ան սիրած է հայրենիքը եւ գովերգած է հայ հերոսները:

Իր գիրքերէն են. «Դիցազնօրէն», «Հայորդիներ» եւ «Հայրենի հրաւեր»:

**Ռուբէն Սեւակ**

Հայ բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ, որ յայտնի եղած է իր գրականութեամբ եւ մարդասիրական գործունէութեամբ: Իբրեւ ազգային ու քաղաքական գործիչ, իր ստեղծագործութիւններով շեշտած է համաշխարհային միասնութեան կարեւորութիւնը:


Իր գիրքերէն են. «Սիրոյ գիրքը» եւ «Հատընտիր»:



**Դանիէլ Վարուժան**

Հայ բանաստեղծ, նաեւ մանկավարժ եւ ուսուցիչ, որուն ստեղծագործութիւններուն մէջ կայ ազգային ուժ, վրէժի ու պայքարի ոգի: Վարուժան համաշխարհային գրականութեան մէջ մեծ անուն է. ան արեւմտահայ առաջին բանաստեղծը եղած է, որ գրած է պարզ ու աղքատ ժողովուրդի ցաւերուն մասին եւ հաւատացած՝ աշխատաւորութեան յաղթանակին:

Իր գիրքերէն են. «Յեղին սիրտը», «Հացին երգը» եւ «Հեթանոս երգեր»:



\*\*\*  
Երբ Google-ով փնտռենք, youtube հայկաշխարհ ապրիլ 24 Մեր առաջ կը բացուի (4:14) 4 վայրկեան եւ 14 երկվայրկեան տեսողութեամբ կարճ տեսերիզ մը, «Շողան» ծրագրի, որուն հովանաւորն է Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարզէն Արք. Չարեան:

### ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻ ՕՐ



Ամէն տարի 22 Ապրիլին աշխարհի շուրջ միլիոնաւոր անձեր կը հաւաքուին տօնելու համար Երկրագունդին օրը: Ասիկա առիթ մըն է մտածելու երկրագունդին հանդէպ մեր ունեցած վերաբերումին մասին եւ միջոց մը՝ շօշափելի քայլեր առնելու, զայն պահպանելու նպատակով:

Առաջին անգամ Երկրագունդի օր կազմակերպուած է Միացեալ Նահանգներու մէջ, 1970-ին, ծերակոյտի անդամ Հէյլորտ Նելսընի կողմէ: Ան իր այս քայլով, ուզած է ժողովուրդին ուշադրութիւնը կեդրոնացնել կենսոլորտի մարտահրաւէրներուն վրայ: Այս առաջին հաւաքին տեղի ունեցած են ցոյցեր, վիճաբանութիւններ եւ տարբեր ձեռնարկներ ամբողջ երկրին մէջ: Այդ օրէն սկսեալ Երկրագունդի օրը դարձած է միջազգային իրադարձութիւն մը, որ կը նշուի ներկայիս աւելի քան 192 երկիրներու մէջ:

Ամէն տարի Երկրագունդի օրը կը կեդրոնանայ յատուկ նիւթի մը վրայ, կը փորձէ լուսարձակի տակ առնել կենսոլորտի գլխաւոր հարցերէն մէկը: Այսպէս՝ 2025-ի ընդհանուր վերնագիրն էր «Մեր ուժը, մեր մոլորակը»: Իսկ այս տարուան վերնագիրն է. «Վերջ դնել կերպընկալի ստեղծած ապականութեան» Ending Plastic Pollution:

Այսօրուան մեր դիմագրաւած մարտահրաւէրները շատ են, բայց մենք գիտենք, թէ միասին գործելով շատ բան կրնանք փոխել: Սիրենք մեր երկիր մոլորակը եւ մեր ներդրումը բերենք անոր պահպանման աշխատանքներուն մէջ:

### ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

Մուշեղ Իշխան


Մուշեղ Իշխան ծնած է 1913-ին, Անգարայի մօտ Սիվրիհիսար հայաշատ գիւղին մէջ: 1915-ին, ընտանիքով աքսորուած է Տէր-Զօրի անապատները եւ ունեցած է դժուար մանկութիւն մը:



1923-ին, ընտանիքը հաստատուած է Դամասկոս: Հոն, Հայոց Ազգային վարժարանը ասարտել է ետք, երկու տարի յաճախած է Կիպրոսի Մելգոնեան վարժարանը, աշակերտելով յայտնի գրագէտ եւ քննադատ Յակոբ Օշականին: Ապա անցած է Պէյրութի Ճեմարան եւ վայելած է Ճեմարանի հիմնադիրներուն՝ Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի մտերմութիւնը: 1935-ին, Ճեմարանի առաջին ասարտական սերունդին հետ ստացած է իր վկայականը:



Լեւոն Շանթ



Նիկոլ Աղբալեան

Բարձրագոյն ուսման երազը զինք տարած է Պելճիքա, ուր ան երկու տարի հետեւած է Պրիւքսէլի համալսարանի մանկավարժական եւ գրականութեան ճիւղերուն: 1940-ին, Համաշխարհային Բ. Պատերազմին ընթացքին, Մ. Իշխան վերադարձած է Պէյրութ եւ իր կեանքը նուիրած է հայ նորահաս սերունդներու դաստիարակութեան աշխատանքին: Ան իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է Նշան Փալանճեան ճեմարանին մէջ, որուն փոխ-տնօրէնի պաշտօնը ստանձնած է հիմնադիրներուն մահէն ետք:

Հայ մշակոյթի փայլուն դէմք մը ըլլալու կողքին, Մ. Իշխան եղած է գաղափարի մեծ նուիրեալ մը: Ան անցած է ՀՅԴ-ի շարքերը եւ վարած է պատասխանատու պաշտօններ: Մահացած է սրտի տագնապի հետեւանքով 12 Յունիս 1990-ին, արեւմտեան Պէյրութի իր բնակարանին մէջ:

### ՀԱՅ ԼԵՂՈՒՆ

Մուշեղ Իշխան

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն, Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ, Կը ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն եւ բորանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ:

Քանի դարեր եւ քանի ճարտարապետ հանճարներ Աշխատեցան անոր տալ վեհութիւն, գեղ ու պերճանք, Քանի գեղջուկ բանուորներ տքնեցան տիւ եւ գիշեր, Որոնք թաղուած են հիմա մոռացութեան մութին տակ:

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեսէ դարէ դար, Իր ճրագները՝ միշտ լոյս, իր օճախին հուրը՝ վառ, Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մառան:

Հոն է միայն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին Խաժամուժին մէջ օտար՝ կորսնցուցած իր հոգին, Անցեալն անհուն եւ ներկան, նոյնիսկ մթին ապագան...

### ԶԱՏԻԿԸ



Սուրբ Յարութիւնը (որ կը կոչուի նաեւ Ս. Զատիկ) Հայ Առաքելական Եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն ամենակարեւորն է: Ան կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի հրաշալի յարութիւնը իր մահէն երեք օր ետք:

Շարժական այս տօնին (մարտ 22-էն ապրիլ 25-ի միջեւ) կը կատարուի ճրագալոյցի Սուրբ Պատարագը, որմէ ետք կը սկսի տօնակատարութիւնը:

Հայկական սովորութիւն է Զատիկուան սեղանին հրամցնել բրինձով եւ չամիչով պատրաստուած փիլաւ, կարմիր ներկուած հաւկիթներ, բաղարջ անթթխմոր հաց, ձուկ, կարմիր գինի եւ զանազան կանաչեղէններ:

Ինչո՞ւ Զատիկին կարմիր հաւկիթներ կը ներկենք:



Հաւկիթը կը ներկայացնէ ամբողջ աշխարհը, կեղեւը՝ երկինքը. թաղանթը, որ բարակ թափանցիկ մաշկն է, կը ներկայացնէ օդը, ճերմկուցը՝ ջուրը, իսկ դեղինը՝ երկիրը: Կարմիր գոյնը կը խորհրդանշէ Յիսուսի թափած արիւնը, եւ այդ արեամբ՝ մարդկութեան ազատագրումը մեղքերէն: Քրիստոնէաներուն մօտ հաւկիթը ունի երկրի եւ նոր կեանքի խորհուրդ:

### ՃԱՆՉԱՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ



Յովհաննէս Թումանեանի թանգարան (Երեւան)

Յովհաննէս Թումանեանի Երեւանի թանգարանը հիմնադրուած է 1953-ի Ապրիլ 5-ին՝ նուիրուած ամենայն հայոց բանաստեղծին մահուան 30-ամեակին:

Թանգարանը հարուստ է Թումանեանի անձնական իրերով, հագուստով, նկարներով եւ նամակներով, որոնք կը ներկայացնեն անոր կեանքի տարբեր հանգրուանները:

#### Վայր.

Թանգարանը կը գտնուի Երեւանի կեդրոնը, բարձրունքի վրայ, Մոսկովեան փողոց 40 հասցէին: Թանգարան հասնելու համար, պէտք է բարձրանալ 54 աստիճաններ, որոնք կը խորհրդանշեն բանաստեղծին ապրած տարիները:

#### Ցուցարահներ.

Թանգարանի առաջին յարկի ցուցարահին մէջ, ժամանակագրական կարգով ներկայացուած են Թումանեանի կեանքին եւ գործունէութեան վերաբերող նիւթեր՝ լուսանկարներ, նամակներ, փաստաթուղթեր, ձեռագիրներ, ինչպէս նաեւ պատկերներ հեղինակի հեքիաթներու եւ պատմուածքներու թեմաներով:

Թանգարանի երկրորդ յարկին վրայ կը ներկայացուի Թումանեանի Թիֆլիս բնակած վերջին տան վերարտադրութիւնը, 6 սենեակներով եւ այդ ժամանակի կահաւորանքով:

Նոյն այդ յարկին վրայ, առանձին մեծ սրահի մը մէջ կը ցուցադրուի բանաստեղծին անձնական ճոխ գրադարանը՝ 8000 գիրքերով՝ տարբեր լեզուներով եւ տարբեր նիւթերով:

Թանգարանը ունի նաեւ ընդարձակ, լուսաւոր հանդիսասրահ, ուր կը կատարուին ցուցահանդէսներ եւ մշակութային ելոյթներ:


#### Ուշադրութիւն.

Չշխոթենք Յովհաննէս Թումանեանի Երեւանի թանգարանը իր տուն-թանգարանին հետ, որ կը գտնուի Լոռիի մարզի Դսեղ գիւղին մէջ:

Այս տուն-թանգարանին մէջ ծնած է բանաստեղծը 19 Փետրուար 1869-ին: Իսկ 1939-ին, իր ծննդեան 70-ամեակին առիթով, տունը վերածուած է տուն-թանգարանի:




### ԱՐԵՒԸ ԵՒ ԻՐ ԲԱՐԻՔՆԵՐԸ



Գիտնականներ փաստած են, որ արեւի լոյսը զգալի ազդեցութիւն ունի ուղեղի գործունէութեան վրայ: Յերեկի լոյսը կը թելադրէ ուղեղին թէ երբ արթննայ, երբ քնանայ:

Արեւի լոյսի ներկայութեան ուղեղը կը դառնայ ակտիւ աշխոյժ: Այս լոյսը կը բարելաւէ յիշողութիւնը եւ իր ազդեցութիւնը ունի մեր ըմբռնելու կարողութեան ու մտքի կեդրոնացման՝ ուշադրութեան վրայ:

#### Արեւը եւ մեր տրամադրութիւնը



Ճիշդ է, որ արեւուն տաքութիւնը մեծ դեր կը խաղայ, սակայն արեւուն լոյսն է, որ յատկապէս կ'ազդէ մեր տրամադրութեան վրայ: Այս լոյսը կը թափանցէ մեր մարմնին մէջ՝ աչքերուն ընդմէջէն, կը դրդէ մեր մարմնին մէջ բնականօրէն գոյութիւն ունեցող «սերոտոնին»-ը (serotonin), որ կը կոչուի նաեւ «երջանկութեան հորմոն»:

Արեւի լոյսի երկար բացակայութիւնը կրնայ յառաջացնել հիւանդութիւններ, ինչպէս՝ ընկճուածութիւնը: Իսկ արեւոտ եղանակը, ընդհանուր առմամբ, կը ստեղծէ բարձր տրամադրութիւն եւ աշխուժութիւն:

Կը յանձնարարուի օրական նուազագոյնը 30 վայրկեան դուրս գալ ու վայելել ցերեկի լոյսը: Իսկ գիշերը նախքան անկողին ուղղուիլը, հեռու մնալ համակարգիչէն կամ բջիջայինէն, որովհետեւ անոնց արձակած լոյսը պատճառ կրնայ դառնալ, որ ակտիւ երկար ժամանակ մնանք արթուն:



Արեւը եւ մեր ոսկորներու առողջութիւնը

Արեւի ճառագայթները կարեւոր են մեր ոսկորներու առողջութեան համար, որովհետեւ արեւի ճառագայթներու ազդեցութեան տակ, մեր մորթը կ'արտադրէ «Տի» կենսանիւթը (vitamin D), որուն շնորհիւ քալսիումը (calcium) կը կաշի ոսկորներուն: Այսպիսով կ'ամրանայ կմախքը եւ առաջը կ'անուի ոսկրափտութեան (osteoporosis), ոսկորի հիւանդութեան:

«Տի» կենսանիւթը կը զօրացնէ նաեւ մեր ակոսները եւ կը պահպանէ մեր մարմնի դիրմադրողականութիւնը:

«Տի» կենսանիւթը կ'օգնէ կանխարգիլել սրտանօթային, շաքարախտի, քաղցկեղի եւ այլ հիւանդութիւններ:

«Տի» կենսանիւթը կը գտնուի տարբեր ծուկերու մէջ, յատկապէս սալմոնի, ինչպէս նաեւ հալկիթի մէջ:

#### Ջգուշանանք չափազանցութենէ

Անդրադարձանք, թէ որքան կարեւոր է արեւը կամ արեւի լոյսը մեր մարմնին համար, բայց նշենք նաեւ, թէ սաստիկ արեւը կրնայ յառաջացնել ջրագրկում, յոգնածութիւն, գլխացաւեր, մորթային այրուածք եւ մորթային հիւանդութիւններ:

Ջորաւոր արեւը կ'արգիլէ նաեւ կեդրոնացումը:

Հետեւաբար կարեւոր է.

- Խուսափիլ արեւի ուղիղ ճառագայթներէն, յատկապէս կէտորուան ժամերուն:
- Օգտագործել յատուկ քսուկներ (cream) պաշտպանելու համար մեր մորթը արեւի UV ճառագայթներէն:
- Օգտագործել արեւի ակնոցներ պաշտպանելու համար մեր աչքերը:

### ՄՐՋԻՆՆԵՐԸ



Աշխարհի վրայ գոյութիւն ունին միլիառաւոր մրջիններ: Անոնց հաւաքական ընդհանուր ծանրութիւնը շատ ակնհայտ է, քան՝ ամբողջ մարդկութեան ծանրութիւնը:

2023-ին յայտնուեց է, թէ աշխարհի վրայ գոյութիւն ունին մրջիններու ակնհայտ 16.600 տարբեր տեսակներ: Եւ շատ հաւանաբար, որ ակնհայտ ուշ բացայայտուին մրջիններու հազարաւոր այլ տեսակներ:

Կ'ըսուի թէ 10-ը մրջիններէն 9-ն կը մնան բոյնին մէջ: Իսկ 10-էն երկուքը չեն աշխատիր:

Աշխատող մրջիններէն իւրաքանչիւրը, իր յատուկ պաշտօնը ունի բոյնին մէջ:

Չինուորները կը հսկեն թրթուրներուն. իսկ «երեխայ» մրջիններով կը զբաղին ստնտու մրջինները եւ թագուին:

Հետախոյզ մրջինները ուտելիք կը փնտռեն:

Թագուին բոլոր մրջիններուն մայրն է: Սակայն անոր պաշտօնը միայն հակիթները ածելն է: Մրջիններուն մօտ պետ չկայ: Իւրաքանչիւրը գիտէ թէ ինչ պէտք է ընէ իր քովի մրջինին նայելով:

Բոլոր մրջինները քոյր-եղբայր են եւ իրարու շատ կ'օգնեն:

Մրջիններուն տեսողութիւնը տկար է, բայց իրենց աչքերը ունին բացառիկ համայնապատկերային տեսողութիւն (panoramic vision), ինչ որ կ'օգնէ որ տեսնեն թէ իրենց առջեւ, թէ կողմերը, թէ ետեւի մեծ մասը:

Մրջինները իրարու կը յայտնեն ուտելիքի մը կամ վտանգի մը գոյութիւնը, իրար հետ հաղորդակցելով իրենց մարմնին մէջ արտադրուած նիւթի մը շնորհիւ, օգտագործելով իրենց շօշափուկները (antennas):

### ԿԱՊՈՅՏԸ


Բազմաթիւ ուսումնասիրութիւններ ակնհայտ ցած են, որ կապուած մարդոց մեծամասնութեան նախասիրած գոյնն է: Կապուած մաս կը կազմէ հիմնական երեք գոյններու խումբին՝ դեղինին եւ կարմիրին կողքին: Գոյնութիւն ունին կապուած իրարու հարմարութեամբ՝ մուգէն մինչեւ բաց կապուած, մինչեւ կանաչի մօտեցող կապուած: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի նաեւ իր յատուկ անունը, երկինքի կապուած, թագաւոր կապուած, թիւրքուած, էնտիկօ, փեթրոլ կապուած, եւ այլ:

Բնութեան մէջ, կապուած լոյսը կազմող գոյներուն մաս կը կազմէ: Ան նաեւ երկինքին եւ ծովուն գոյնն է: Գոյնութիւն ունին կապուած գոյնով անասուններ, թռչուններ, քարեր կամ ծաղիկներ:

Կապուած գոյնը յաճախ կը կապուի դրական զգացումներու հետ, ինչպէս՝ վստահութիւն, խաղաղութիւն եւ կայունութիւն: Ան յաճախ կը համարուի արտօնող գոյն տեսողութեան համար: Բայց կապուած կրնայ նաեւ ներկայացնել տխրութիւնը, ինչպէս՝ 19-րդ դարուն Միացեալ Նահանգներու մէջ ծնունդ առած պլուզ (Blues) երաժշտութիւնը: Այս եղանակները եւ երգերը կը պատմեն սեամորթ ստրուկներուն ցաւը եւ ապրած տանջանքը: Նոյն ձեւով, անգլերէնով «To feel blue», «Կապուած զգալ», կը նշանակէ տխուր եւ մեղամաղձոտ ըլլալ:



#### \*\*\* Գիտէ՞իր, թէ

- Երկրագունդը ճանչցուած է իբրեւ «Կապուած մոլորակ»:
- Կապուած կէտծուկը աշխարհի ամէնէն մեծ անասունն է:
- Աշխարհի բնակչութեան 8-10 առ հարիւրի աչքերը կապուած են:



Կրնան գտնել կերպարին համապատասխանող շուքը:

Ո՞ր ճամբով այս մարդը կը հասնի իր պայուսակին:



**Ձեռային աշխատանք  
Հավիթներու պարտեզ մը**

Այս տարի, փոխանակ գոյնգոյն հավիթները պարզ ամանի մը մէջ դնելու, շինէ փոքրիկ պարտեզ մը, զարդարելու տօնական սեղանը եւ ստեղծելու զարնանային գեղեցիկ մթնոլորտ մը:

Այս ձեռային աշխատանքը պիտի կարենաս իրագործել տան մէջ գտնուող առարկաներով. խաաքարտէ տուփ մը (որ պիտի ըլլայ պարտեզը), թուղթ թաշկինակի պատասներ, գունաւոր թուղթեր կամ բարակ խաաքարտներ, ներկ, խէժ...



**Ո՞Վ Կ'ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ**

Ապրիլ ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 12 Մայիս 2026: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէ՛ք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէ՛ք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝ 3401 Olivar Asselin Montréal, Québec H4J 1L5

**1. Ո՞վ էր Գրիգոր Զօհրապ:**

- ա- Գ. Զօհրապ թատերագէտ էր եւ քանդակագործ:
- բ- Գ. Զօհրապ արձակագիր էր եւ քաղաքական գործիչ:
- գ- Գ. Զօհրապ բժիշկ էր եւ բանաստեղծ:

**2. Սիամանթօն իր բանաստեղծութիւններուն մէջ, հայու ցաւէն ու տառապանքէն զատ ինչ արտայայտած է:**

- ա- Ան արտայայտած է հայու պայքարն ու վրիժառութեան ոգին:
- բ- Ան արտայայտած է սէրը իր սիրուիին նկատմամբ:
- գ- Ան նկարագրած է բնութիւնը:

**3. Ո՞ր հեղինակի գիրքերէն են. «Յեղին սիրտը», «Հացին երգը» եւ «Հեթանոս երգեր»:**

- ա- Ռուբէն Սեաւկին:
- բ- Դանիէլ Վարուժանին:
- գ- Սիամանթոյին:

**4. Ինչ է Զատկուան հավիթի խորհուրդը քրիստոնէականներուն մօտ:**

- ա- Հավիթը ունի երկրի եւ նոր կեանքի խորհուրդ:
- բ- Հավիթը ունի երկրի եւ երկնքի խորհուրդ:
- գ- Հավիթը ունի երկրի եւ ջուրի խորհուրդ:

**5. Ո՞վ է ան փայլուն դէմքը, որ Պէյրուօթի Ճեմարանը յաճախելով եւ որպէս ուսուցիչ պաշտօնավարելով, վայելած է Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի մտերմութիւնը:**

- ա- Յակոբ Օշական:
- բ- Մուշեղ Իշխան:
- գ- Դանիէլ Վարուժան:

**6. Յ. Թումանեանի Երեւանի թանգարանը հասնելու համար, քանի՞ աստիճաններ պէտք է բարձրանալ:**

- ա- 45 աստիճաններ:
- բ- 54 աստիճաններ:
- գ- 64 աստիճաններ:

**7. Ո՞ր կը գտնուի Յ. Թումանեանի տուն-թանգարանը:**

- ա- Տաւուշի մարզի Այգեպար գիւղին մէջ:
- բ- Շիրակի մարզի Գետք գիւղին մէջ:
- գ- Լոռիի մարզի Դսեղ գիւղին մէջ:

**8. Ինչո՞ւ արեւի ճառագայթները կարելոր են մեր ոսկորներուն առողջութեան:**

- ա- որովհետեւ արեւի ճառագայթներու ազդեցութեան տակ, մեր մորթը կ'արտադրէ «Տի» կենսասնիւթը, որուն շնորհիւ քալսիւմը կը կայսի ոսկորներուն:
- բ- որովհետեւ արեւի ճառագայթները հարուստ են երկաթի ուժով:
- գ- որովհետեւ արեւի ճառագայթներու ազդեցութեան տակ, մեր մորթը կ'արտադրէ «Սի» կենսասնիւթը:

**9. Աշխատող մրջինները ունին իրենց յատուկ պաշտօնները բոյնին մէջ: Ինչ է զինուորներուն դերը:**

- ա- Զինուորները կը հսկեն «երեխայ» մրջիններուն:
- բ- Զինուորները կը պաշտպանեն թագուիին:
- գ- Զինուորները կը հսկեն թրթուրներուն:

**10. Ո՞ր մուրաբանը ճանչցուած է իբրեւ «Կապոյտ մուրաբան»:**

- ա- Լուսնթագը:
- բ- Հրատը:
- գ- Երկրագունդը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757  
Email: sylvia@horizonweekly.ca  
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի  
Թիւր պատրաստեց Զապէլ Թորոսեան  
Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի